Ամփոփ նյութ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ՝ բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
18.03.2021 թ. թիվ 1/06 ԲԳ-Ա

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտման համար Բանկի նկատմամբ կիրառել ***տուգանք՝ 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ինչպես նաև նախազգուշացում՝ երկամսյա ժամկետում արտարժույթի առուվաճառքի գործընթացները (այդ թվում՝ բանկի հետ կապված անձանց հետ) կարգավորելու (Բանկի ներքին իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու) հանձնարարականով:***
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Բանկ մուտքագրվելու կամ սահմանված կարգով Բանկի լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել երկամսյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**